ՎԱՐՈՒԺԱՆ ՍՐԿ. ՀԱԿՈԲՅԱՆ

ԵԿԵՂԵՑԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ ՄԻՆՉԵՒ ԺԱ ԴԱՐ
(ՊԱՏՄԱՃԱՌՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)

Վասպուրականում, ինչպես նաեւ ամբողջ Հայաստանում, ըստ ավանդության եկեղեցիներ էին կառուցվում սկսած Ա դարից: Դեռեւս Ս. Թադեոս եւ Ս. Բարդուղիմեոս առաքյալները Հայաստանում քարոզչության ժամանակ կառուցում էին եկեղեցիներ, մատուռներ ու վանքեր: Մեծ Հայքի Վասպուրական նահանգում Ս. առաքյալները կառուցել են Անգղա Ս. Աստվածածին, Ասպարածին, Ս. Թովմաս, Ս. Խաչ, Ծիծաղաբեր Ս. Աստվածածին, Կարմրավորի Ս. Աստվածածին, Հոգյաց վանք, Ս. Թադե եւ այլ վանքեր ու եկեղեցիներ[1]: Սակայն այնքան էլ հստակ չէ, թե այդ վանքերն ու եկեղեցիները արդյոք հենց սկզբից ունեցե՞լ են ճարտարապետական այն կառուցվածքը, ըստ որի կարելի էր այդ շինությունները վանք կամ եկեղեցի անվանել:

Ա դարում հիմնականում վկայարաններ էին կառուցվում, որոնց հիմքի վրա հետագայում վեր էին խոյանում մեզ հասած ճարտարապետական հորինվածքով վանքերն ու եկեղեցիները:

Ըստ բազմավաստակ ճարտարապետ Թ. Թորամանյանի՝ «Քրիստոնեական աշխարհում մինչեւ IV դարը եկեղեցիների համար մշակված որոշ ձեւ չկար»[2]: Պատճառն այն էր, որ մինչ Դ դար քրիստոնեությունը ոչ մի երկրում դեռեւս պետական կրոն չէր հռչակվել, եւ շատ երկրներում՝ այդ թվում նաեւ Հայաստանում, արգելված էր քրիստոնեությունը: Հետեւաբար քրիստոնյաները չէին կարող ազատորեն գործել, նրանք անընդհատ հալածանքների էին ենթարկվում: Այն վանքերն ու եկեղեցիները, որոնք ըստ ավանդության առաքյալներն են կառուցել, բնականաբար չեն ունեցել մեր իմացած սովորական եկեղեցիների տեսքը, դրանք այդ տեսքը ստացել են Դ դարից հետո:

Ա դարում առաքյալները վանքեր ու եկեղեցիներ կառուցում էին հիմնականում հեթանոսական մեհյանների տեղում, այդպիսի վանքեր էին Ս. Թադեն, Հոգյաց վանքը, Անգղա Ս. Աստվածածինը, Ծիծաղաբեր Ս. Աստվածածինը եւ այլն: Չկար հստակ եկեղեցական ճարտարապետություն, որով առաջնորդվեին մարդիկ եկեղեցիներ կառուցելիս: Այս շրջանում կառուցված «վկայարանները» բավականին անշուք ու հասարակ էին:

Հայկական եկեղեցական ճարտարապետության պատմության մեջ Դ դարով բաց-

---

1 Տե՛ս **Հ. Ոսկեան**, Վան-Վասպուրականի վանքերը, մաս Գ, Վենետիկ, 1947, էջ 748: Հմմտ. **Ե. Լալայան,** Վասպուրականի նշանավոր վանքեր, Ա պրակ, Թիֆլիս, 1912, էջ 69 (այսուհետեւ **Ե. Լալայան**):

2 **Թ. Թորամանյան,** Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, մաս Ա, Երեւան, 1942, էջ 168 (այսուհետեւ՝ **Թ. Թորամանյան**):

վում է մի նոր էջ, որը մանագետները եկեղեցական ճարտարապետության սկիզբ են համարում: Հայտնի է, որ հենց այդ դարի սկզբներին է, որ Հայաստանում քրիստոնեությունը հաղթանակ է տանում եւ հռչակվում որպես պետական կրոն: Հայաստանում, ինչպես նաեւ մասնավորապես Վասպուրականում, սկսում են եկեղեցիներ կառուցվել: Ս. Գրիգոր Լուսավորիչը Կեսարիայում ձեռնադրվելուց հետո Հայաստան վերադառնալիս երկրի տարբեր մասերում՝ այդ թվում նաեւ Վասպուրականում, կառուցում է վանքեր ու եկեղեցիներ (Զորովանք, Սալնապատի Ս. Գրիգոր, Լիմի անապատ, Կտուցի անապատ եւ այլն[3]): Գրիգոր Լուսավորիչը նույնպես սկզբից վկայարաններ էր կառուցում, որոնք հետագայում վերաշինվում էին: Սակայն հենց Դ դարում Հայաստան է ներթափանցում եկեղեցաշինության հստակ ոճ:

Արդեն Դ դարում 313 թ. Հռոմեական կայսրությունում Կոստանդիանոս Մեծ կայսրը քրիստոնյաներին արտոնել էր ազատ գործել, որի արդյունքում քրիստոնյաները սկսեցին իրենց համար պաշտամունքային շենքեր կառուցել: «Կայսրը հրամայեց հեթանոսական մեհյաններն ու «basilique» կոչված շինությունները քրիստոնեից տրամադրության տակ դնել նոր կրոնի անունով սրբագործելու համար»[4]: Այդ հունական մեհյանները քառանկյուն սրահներ էին, երբեմն արտաքուստ շրջապատված սյունազարդ ծածկույթով, իսկ basilique-ները նույնպես քառանկյունի շինություններ էին՝ ներսի կողմը հաճախ երկու կամ ավելի սյունաշարով թեւերի բաժանված: Սրանք ծառայում էին հասարակաց ժողովների համար: Երկարության մի ծայրի վրա առկա էին շենքից դուրս ցցված կիսաբոլորակ աբսիդներ, որոնք ունեին հատուկ նշանակություն, դա թագավորի կամ ժողովի նախագահի համար էր[5]:

Կարելի է ենթադրել, որ հենց Ս. Գրիգոր Լուսավորիչը, որ մեծացել էր հունական միջավայրում եւ դաստիարակվել քրիստոնեական ոգով, իր հետ Հայաստան է բերել եկեղեցաշինության այդ հունական ոճը, որը ժամանակի ընթացքում մեր հմուտ ճարտարապետների շնորհիվ կրեց բազմաթիվ փոփոխություններ եւ ստացավ ներկայիս վերջնական տեսքը: Պետք է նշել նաեւ, որ Դ դարում Հայաստանում տարածվել էր ասորաքաղդեական եկեղեցական ճարտարապետական ոճը: Ողջ Փոքր Ասիայում, ինչպես նաեւ Հայաստանում, լայն տարածում էր գտել պարսկական ճարտարապետական ոճը, որից նույնպես ազդվել է հայկական եկեղեցաշինությունը[6]:

Հայ ճարտարապետները, ինչ-որ չափով ազդվելով ժամանակի եկեղեցաշինական ուղղություններից, սկսեցին կառուցել եկեղեցիներ՝ համադրելով իրենց գիտելիքները ժամանակի եկեղեցաշինության ուղղությունների հետ: Վաղ միջնադարում եկեղեցական ճարտարապետությունը հիմք դրեց հորինվածքային, գեղարվեստական եւ կառուցողական սկզբունքներին[7] :

---

3 Տե՛ս **Ե. Լալայան,** էջ 72, 88:

4 **Թ. Թորամանյան,** էջ 168:

5 Անդ.:

6 Տե՛ս անդ., էջ 80:

7 Տե՛ս **Վ. Հարությունյան,** Հայկական ճարտարապետության պատմություն, Երեւան, 1992, էջ 68 (այսուհետեւ՝ **Վ. Հարությունյան**):

Դ-Ե դարերի հայկական եկեղեցիները գերազանցապես անգմբեթ էին, բազիլիկատիպ՝ միանավ եւ եռանավ[8]: Միանավ բազիլիկ եկեղեցիներն ունեին համեստ ճարտարապետական հորինվածք, նրանց երկթեք կտուրի տակ տեղավորված ու կիսագլանաձեւ թաղով ծածկված է երկարավուն դահլիճը, որն արեւելյան կողմում ավարտվում է կիսակլոր խորանով՝ մեկ կամ երկու ավանդատներով: Իսկ եռանավ բազիլիկ եկեղեցիները, միանավ եկեղեցիների հետ համեմատած ունեն բավականաչափ ընդարձակ դահլիճ, որ երկարավուն մույթերով բաժանվում է երեք երկայնական նավերի, որոնցից միջինը մյուս երկուսի հետ համեմատած ավելի լայն է: Արեւելյան կողմում տեղավորված է կիսակլոր կամ պայտաձեւ խորանը՝ երկու կամ մի կողմից ավանդատնով: Բոլոր նավերը ծածկվում են կիսագլանաձեւ թաղերով եւ կղմինդրով ծածկված երկթեք կտուրով[9]: Ըստ նշանավոր մասնագետներից մեկի՝ «Եկեղեցիների պատերը կառուցվում էին մաքուր, փաշած, խոշոր չափերի ուղղանկյուն որմնաքարերից, օգտագործվում էր նաեւ որձաքար, տուֆ, գետաքար, նաեւ հում աղյուս, եւ այդ քարերն իրար միացնում էին կրաշաղախով՝ կազմված կրից, ավազից եւ փվյալ շենքի շինաքարի բեկորներից»[10]:

Ե դարում եկեղեցական ճարտարապետությունը թեւակոխում է զարգացման մի նոր շրջան, որն ընթանում է գմբեթավոր եկեղեցիների փորձերով: «Գմբեթավոր տաճարները հանդես են գալիս մի կողմից IV-V դարերի բազիլիկ եկեղեցիների հիմքի վրա (գմբեթակիր բազիլիկա), մյուս կողմից առաջանում է տարածական-ծավալային միանգամայն նոր հորինվածք խաչաձեւ կենտրոնագմբեթ կառուցվածքի տիպը»[11]:

Զ-Է դարերի հայկական եկեղեցական ճարտարապետության մեջ զարգանում է մի նոր փուլ: Այս ընթացքում կառուցվում են կենտրոնաձիգ-խաչագմբեթ եկեղեցիներ: Տվյալ ժամանակաշրջանի Հայաստանում, ինչպես նաեւ Վասպուրականում, զարգանում է նաեւ քառակուսի կամ խաչաձեւ հատակագծով գմբեթավոր փոքրաչափ եկեղեցական շենքերի մի առանձին խումբ, որոնց մեջ են մտնում խաչաձեւ հատակագծով եկեղեցիներ, պարզ խաչաձեւ ու եռախորան եկեղեցիներ[12]:

Հայկական եկեղեցական ճարտարապետության համար Զ-Է դարերը եղան անանխադեպ զարգացման շրջան, հայազգի հմուտ ճարտարապետները ստեղծագործական հմտության շնորհիվ կառուցվեցին բազմապիսի գմբեթավոր եկեղեցիներ, որոնցից շատ շատերը կանգուն են մինչեւ այսօր: Զարգացման այս շրջանը հասավ նաեւ Մեծ Հայքի անբաժանելի մաս կազմող Վասպուրական նահանգ: Այստեղ եւս կառուցվեցին գմբեթավոր, կենտրոնաձիգ-խաչագմբեթ եկեղեցիներ իրենց բոլոր տարատեսակներով:

Ը-Թ դարերում հայկական եկեղեցական ճարտարապետությունը գրեթե չի զարգացել կապված Հայաստանի քաղաքական ծանր դրության հետ: Այս ժամանակահատվածում հայ ժողովուրդը հերոսական պայքար էր մղում թշնամիների դեմ: Անընդհատ ռազմական

8 Տե՛ս **Վ. Հարությունյան,** Հայ ժողովրդի ճարտարապետական ժառանգությունը, Երեւան, 1985, էջ 9 (այսուհետեւ՝ **Վ. Հարությունյան,** Հայ ժողովրդի):

9 **Վ. Հարությունյան,** էջ 10:

10 Տե՛ս **Վ. Հարությունյան,** Ակնարկ հայ ճարտարապետության պատմության, Երեւան 1964, էջ 76 (այսուհետեւ՝ **Վ. Հարությունյան,** Ակնարկ):

11 Անդ., էջ 96:

12 Տե՛ս **Վ. Հարությունյան,** էջ 80-81:

գործողություններ էին տեղի ունենում, այս պատճառով չէին կարողանում ճարտարապետությունը զարգացնել, որի համար անհրաժեշտ էին խաղաղ պայմաններ, իսկ կյանքի գնով կառուցված եկեղեցիներն ու վանքերը քանդվում էին արյունարբու թշնամու կողմից եւ կամ կողպտվում: Կարծես թե հենց այս պատճառով է, որ ամբողջ Վասպուրական նահանգում Ը-Թ դարերում կառուցվում է ընդամենը երկու եկեղեցի՝ Ը դարում Նախճավանում Ս. Երրորդություն եկեղեցին եւ Ը-Թ դարերում՝ Գողթնում Մցգունի Ս. Ստեփանոս վանքը, թեեւ այս երկու վանքերն արդեն Վասպուրական նահանգում չէին գտնվում, քանի որ Գողթն ու Նախճավան գավառները վերջինիս կազմի մեջ չէին:

Հայկական եկեղեցական ճարտարապետությունը մեծապես զարգանում է Թ-ԺԱ դարերում, երբ Հայաստանը թեւակոխել էր խաղաղության մի նոր շրջան: Թ դարի վերջին ձեւավորված Բագրատունյաց թագավորությունը զարգացման լայն հնարավորություն է ընձեռում, որից անմասն չի մնում նաեւ Վասպուրական աշխարհը:

Հայ ճարտարապետները, շարունակելով ավանդական դարձած հատակագծային ձեւերի կիրառությունը, իրենց հոյակապ գործերում մարմնավորեցին դարաշրջանի ոճական նոր հատկանիշներ: «Ճարտարապետության բնորոշ հատկանիշներից մեկը դարձավ գեղատեսիլությունը (քանդակագործության եւ որմնանկարչության սինթեզը ճարտարապետության մեջ), սերտ կապը բնության հետ, ճարտարապետական երկի եւ բնական միջավայրի համաձայնեցված փոխներթափանցումը»[13]:

Եկեղեցու ամենատարածված տիպը, այսպես կոչված «գմբեթավոր դահլիճը», վերարտադրում էր Զ-Է դարերի եկեղեցիների հորինվածքային գաղափարը: Հայաստանի այդ դարերի կենտրոնագմբեթ եկեղեցիների տիպը որոշ վերափոխություններով վերարտադրված է Աղթամարի Ս. Խաչ, Վարագավանքի Ս. Աստվածածին եկեղեցիներում: Եկեղեցու հատակագծային մշակման շնորհիվ կառույցը ենթարկվում է որոշ փոփոխությունների, հանդես են գալիս որոշակի նորություններ՝ լրացուցիչ ավանդատներով (երբեմն երկհարկ) արեւմտյան անկյուններում եւ այլն[14]:

Չնայած Թ-Ժ դարերում հայկական ճարտարապետության զարգացումը պատմական Հայաստանի բոլոր նահանգներում էլ խարսխվեց Զ-Ը դարերի այնքան հարուստ, ոճական տեսակետից այնքան միասնական ճարտարապետության վրա, սակայն երկրի քաղաքական մասնատվածության պատճառով առանձին վայրերում առաջացան տեղական յուրահատուկ ճարտարապետական դպրոցներ, որոնք Թ-Ժ դարերի սահմանագծում ունեն իրենց որոշակի առանձնահատկությունները: Այդպիսի դպրոցներից էր Վասպուրականի ճարտարապետական դպրոցը:

Թ-ԺԱ դարերում Վասպուրականում, ուր իշխում էին Արծրունյաց հզոր թագավորները, ճարտարապետությունը թեւակոխում է զարգացման մի նոր փուլ. աննախադեպ վերելք է ապրում՝ դրսեւորելով իր ինքնատիպ ու անկրկնելի դեմքը:

Վասպուրականի Գագիկ I Արծրունի թագավորի գահակալության տարիներին (908-943) ծավալված շինարարական բուռն գործունեությունը իրականացվում էր այնպիսի

13 **Վ. Հարությունյան,** Հայ ժողովրդի, էջ 18:
14 Տե՛ս **Վ. Հարությունյան,** էջ 200-201:

բազմաքանքար ճարտարապետի ստեղծագործության միջոցով, ինչպիսին «... իմաստութեամբ լի եւ իր գործերում զորաւոր...»[15] Մանվելն էր: Հիմնվելով վաղ միջնադարյան հայկական ճարտարապետության, այդ թվում նաեւ տեղական հարուստ ավանդույթների վրա՝ Մանվել ճարտարապետը հրաշագործեց Աղթամարի Ս. Խաչ հռչակավոր եկեղեցին, որով բացվեց հայ արվեստի ու ճարտարապետության պատմության մեջ մի նոր էջ: Շինարարական աշխատանքներ են ծավալվում Վանում, Վարագում, Ոստանում, Աղրակում եւ այլուր, մի խոսքով ծաղկում է ապրում եկեղեցաշինությունը: Եկեղեցիների շինարարությունը Վասպուրականում ընթանում է ավանդական տիպատեսակների ստեղծագործական վերարտադրության ճանապարհով: «Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու հատակագծային եւ ծավալատարածական հորինվածքի համար ելակետ է հանդիսացել Աղրակի Ս. Էջմիածին եկեղեցին: Վաղ միջնադարում այստեղ ստեղծված կենտրոնագմբեթ-խաչաձեւ եկեղեցիների հիմնական փուլը՝ հանձին Աղիովիտի Արծվաբեր տաճարի, կիրառություն է ունեցել, զարգացած միջնադարում այստեղ հանդիպում է քառախորան (Վարագավանքի Ս. Աստվածածին) եւ եռախորան (Նարեկավանք) տարբերակներով»[16]:

Ըստ տիպերի Վասպուրականի եկեղեցիները բավականաչափ բազմազան են: Վասպուրականի տարածքում հանդիպում են գմբեթավոր դահլիճներ (Ասպարածին), գմբեթակիր բազիլիկներ (Գարմրակ Ս. Աստվածածին), միանավ ու եռանավ բազիլիկներ (Ս. Ստեփանոս, Ս. Նշան եկեղեցիները Գողթնում եւ այլն): Հանդիպում են նաեւ այնպիսի հատակագծային ու ծավալատարածական հորինվածքով եկեղեցիներ, որոնք դուրս են հանրահայտ տիպատեսակներից ու զուտ տեղական երեւույթներ կարող են դիտվել, օրինակ՝ Աղթամարի Ս. Խաչ, Իլուի Ս. Աստվածածին, Նարեկավանք եւ այլն:

Գործադրված շինարվեստի տեսակներից Վասպուրականի ճարտարապետական դպրոցը որոշ ընդհանրություններ ունի Սյունիքի ճարտարապետական դպրոցի հետ («շարվածք անկանոն ձեւի քարերից, սրբատաշ, կանոնավոր ձեւի քարերի օգտագործում գերազանցապես կոնստրուկտիվ տեսակետից պատասխանատու մասերում»[17]): Բնական քարերի հետ այստեղ հետագա դարերում լայնորեն կիրառություն է գտնում թրծված աղյուսը:

Սկսած Ժ դարից Վասպուրականում որեւէ շենք կառուցելիս նախօրոք պատրաստում էին այդ կառույցի մանրակերտը, հետո նոր սկսում էին շենքի շինարարությունը: Այդպես էր նաեւ եկեղեցաշինության մեջ. նախօրոք կառուցում էին եկեղեցու մանրակերտը, այնուհետեւ՝ եկեղեցիները[18]:

Այսպիսով, Ժ դարում Վասպուրականի Գագիկ Ա Արծրունի թագավորը բուռն կերպով զարգացնում է եկեղեցաշեն գործունեությունը, որը շարունակում են նաեւ Արծրունի մյուս զահակալները, եւ որոնց կառուցած հիանալի եկեղեցիներից շատ շատերը կանգուն են մինչեւ այսօր:

---

15 **Թովմա Արծրունի եւ Անանուն,** Պատմութիւն Տանն Արծրունեայց, Երեւան 1985, էջ 460 (այսուհետեւ՝ **Թովմա Արծրունի**):

16 **Վ. Հարությունյան,** էջ 222:

17 Անդ.:

18 Տե՛ս **Թովմա Արծրունի,** էջ 395:

Ժ դարում, Վասպուրականում կառուցվում են Աղթամարի Ս. Խաչ, Իլուի Քառասունխորան, Մահռաշտի Ս. Պետրոս վանքերը, Ամրականի Ս. Գեւորգ, Ս. Սիոն, Վարագավանքի Ս. Նշան, Ս. Աստվածածին եկեղեցիները Գագիկ Արծրունի թագավորի կողմից, որոնց ճարտարապետը հավանաբար Մանվելն է եղել[19]:

Այս ժամանակաշրջանում Վասպուրականում կառուցվում են նաեւ Առտերի Ս. Աստվածածին, Գանձակա Ս. Կարապետ, Ս. Թովմա առաքյալ, Կարմրակ Ս. Աստվածածին, Նավուշի Ս Ստեփանոս, Նարեկավանք, Սպիտակ վանք, Փութկու Ս. Գեւորգ եւ այլ վանքեր ու եկեղեցիներ, որ կառուցել են Արծրունի գահակալները:

Արծրունիների եւ Վասպուրականի մյուս նշանավոր իշխանների եկեղեցաշեն գործունեության շնորհիվ է, որ արդեն ԺԱ դարում, երբ Վասպուրականի վերջին թագավոր Սենեքերիմ Արծրունին Վասպուրականը փոխանակեց Սեբաստիա քաղաքի հետ, ըստ Մատթեոս Ուռհայեցու վկայության «Վասպուրականում կար 115 վանք»[20]:

19 Տե՛ս **Թովմա Արծրունի,** էջ 392:
20 **Մատթեոս Ուռհայեցի,** ժամանակագրություն, Երեւան, 1973, էջ 32: